Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/18>> ծածկագրով ՀՀ Արարատի մարզի <<Մասիսի թիվ 5 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի (նոր մասնաշենքերի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26.09.2019թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահող՝ Դ. Շատվերյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ար. Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Դ. Շատվերյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 05.09.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (09.09.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 20.09.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. ***Մասնագիտական փորձառության մասով***

ա) բացակայում են ներկայացված 05.05.2018թ. կնքված N «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-18/13»-2 (750,000 ՀՀ դրամ արժեքով) պայմանագրի 7.13 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ N 3-ի և N 3.1-ի օրինակելի ձևերը (չլրացված),

բ) ներկայացված 25.07.2018թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-10/12-2 (4,350,000 ՀՀ դրամ արժեքով) պայմանագիրը նմանատիպ դիտարկելու համար հարկավոր է ներկայացնել նաև հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր (օրինակ՝ նախագիծ, փորձաքննության դրական եզրակացություն և այլն՝ հիմնավորելու համար, որ օբյեկտը հանդիսանում է առնվազն 200 և ավելի աշխատատեղով վարչական օբյեկտ),

գ) ներկայացված պայմանագրերը (17.03.2017թ. կնքված A-128/17, 05.05.2018թ. կնքված N «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-18/13»-2 և 25.07.2018թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-10/12-2) գումարային արտահայտությամբ չեն բավարարում հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետով սահմանված 50%-ի պահանջին:

2. ***Աշխատանքային ռեսուրսների մասով***

ա) Հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետով պահանջվող աշխատակազմի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում բացակայում են՝

1) ճարտարապետի մասով՝ ճարտարապետական ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու բարձրագույն դասի <Ա> ենթադասի արտոնագիրը կամ գործողության մեջ գտնվող <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն> լիցենզիայի <Բնակելի, հասարակական և արտադրական> ներդիրը (մասնագետի անվան առկայությամբ),

2) ճարտարագետ-շինարարի մասով՝ ճարտարագետ-կոնստրուկտորի գործունեություն իրականացնելու առաջին դասի <Ա1> ենթադասի արտոնագիրը կամ գործողության մեջ գտնվող <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն> լիցենզիայի <Բնակելի, հասարակական և արտադրական> ներդիրը (մասնագետի անվան առկայությամբ),

բ) ճարտարագետ-հիդրոտեխնիկի մասով՝ հայտով ներկայացված <<բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր>> ներդիրում ներառված անձի /Գուրգեն Հակոբյանի/ որակավորումը հիմնավարող փաստաթուղթը՝ ինժեներ-օդերևութաբանի դիպլոմը չի համարվում Ճարտարագետ-հիդրոտեխնիկի որակավորմամբ բարձրագույն կրթության դիպլոմ:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 20.09.2019թ. ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում (25.09.2019թ. դրությամբ) արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Դ. Շատվերյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Հազարաշեն>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Դ. Շատվերյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Դ. Շատվերյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ ---------- Դ. Շատվերյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան